

ինչպէս Զիթենեաց լերան հայկական մողայիքները, հետեւաբար միննոյն ժամանակի գործ. մէկ խօսքով Յուստինիանոսի օրով շինուած. վասն զի, ըստ զիտնոց, մողայիքի արուեստին ամէնէն ծաղկեալ թուականը կը նկատուի Յուստինիանոսի դարը: Այս պարագան մեզ կը հաւաստէ թէ Դամասկոսի դրան մատիկ հայկական այս գեղանկար մողայիքն ալ Յուստինիանոսի ժամանակին կը պատկանի, վանքի մը կամ եկեղեցւոյ մը յարկին տակ շինուած, որով մողայիքին հետ վանքն ալ կանգուն մնացած կ'ըլլայ մինչև Զ. դարու կէսը: Արդ, Անաստաս վրդ.ի նկարագրութեան համաձայն, Պողիկոսոսի վանքը Երուսաղէմի հիւսիսային կողմը շինուած ըլլալը պատմականօէն յայտնի ըլլալով վերև յիշուած մողայիքը պահպանող յարկին նոյն վանքին շէնքը ըլլալը հաւանական կը գտնենք: Ան մերձաւորապէս է. դարու սկիզբը կործանուած է. մողայիքը դարերով հողի փլատակներուն տակ մնացած, եւ 1894ին, պատահական պեղումներէն երևան ելած է:

Վերև յիշուած հայկական խաչքարին կտորները իրար բերուած եւ կարգացուած է հետեւեալ հայերէն արձանագրութիւնը.

«Յիշեայ Պետրոս որ սարս եւ Յոնան որ ետ առնէզ զիսցս զայս.»  
 Իսկ մողայիքին վրայ արձանագրուած է Մեսրոպեան հնագոյն գրերով հետեւեալ յիշատակարանը.

«Վասն յիշասակի եւ փրկութեան անկնայն Հայոց գորոց զանուանս Տեր գիսե».

Այս երկրորդ յիշատակարանը անտարակոյս ակնարկութիւն մըն է ա՛յն Հայերուն, որոնց սկերտաիքը մողայիքին վիճափոր քարայրին մէջ պահուած կը մնային: Որո՞նք են այդ հայերը. այդ մասին յիշատակարան չունինք. անոնք հաւանաբար ա՛յն Մելիտինեցի հայ նահատակներն են որ կը յիշատակուին Մելիտինեցի Մեծն Եւզիմիոսի վարքին մէջ: Պատմազիրներէ զիտենք որ վերջնոյս օրով մանաւանդ, յաճախակի Երուսաղէմ ուխտի եկող Մելիտինեցի Հայեր կ'այցելէին նաև իրենց հայրենակցին, ի Սահէլ: Երուսաղէմի անապատին նոյն այցելուաց մէջ կը զըտնուէին հայ մեծ անձնաւորութիւններ: Հաւանական է որ յիշուած նահատակաց նոյն նշխարները Մելիտինեցի ուխտաւորներ շատ կ'անուխէն Երուսաղէմ բերած եւ ամփոփած են դարձեալ Մելիտինեցի Ս. Պողիկոսոսի վանքին մէջ, ուր յետոյ, ի պատիւ